Պարոն Հ. Կարապետյանին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան _____

«14» 10 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝**
   - Անուշիկ Աղինյան,
2. **Զբաղեցրած պաշտոնը –**

– ՀՀ ՀԾԿՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական և դատական դպասարկման բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները** – Վիեննա (Ավստրիա), 2025 թվականի հոկտեմբերի 6-9-ը.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)** – Էներգետիկ համայնքի կարգավորող խորհուրդ (ECRB):
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)** – մասնակցություն էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հանձախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հերթական նիստին և Եվրոպայի էներգետիկայի կարգավորողների խորհրդի, էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի և էներգետիկայի կարգավորողների միջերկրածովյան ասոցիացիայի եռակողմ հանդիպմանը.
6. **Քննարկված թեմաները (հարցերը)**

Եռակողմ հանդիպմանը քննարկվեցին էներգետիկայի ոլորտի մի շարք արդիական հարցեր, մասնավորապես՝

- էլեկտրաէներգիայի հասանելիության ապահովումը բոլոր սպառողներին, հատկապես խոցելի սպառողներին: Քննարկվեցին էլեկտրաէներգիայի վճարների նվազեցման

հնարավոր միջոցները, հատկապես՝ էներգետիկ աղքատության մեջ գտնվող անձանց պարագայում: Այս համատեքստում քննարկվեցին ԵՄ կարգավորումները, նախատեսվող փոփոխությունները, էներգաարդյունավետության դերը էներգետիկ աղքատության հաղթահարման պրոցեսում: Ներկայացվեց նաև Եգիպտոսի հաջողված փորձը՝ բոլոր սպառողներին հասանելի բնական գազ ապահովելու գործընթացում:

- Ներկայացվեց էլեկտրաէներգիայի շեյրինգը որպես սպառողներին առավել նվազագույն գներով էլեկտրաէներգիա մատակարարելու մեխանիզմ, ընդգծվեցին դրա առավելությունները ինչպես սպառողների, այնպես էլ արտադրողների և հնարավոր ներդրողների տեսանկյունից: Որպես կայացած օրինակ ներկայացվեց Ավստրիայի փորձը:
- Քննարկվեց սպառողների տեղեկացվածության դերը՝ առավել հասանելի պայմաններով ծառայություններ ընտրելու գործընթացում: Մասնավորապես ներկայացվեցին սակագների /փաթեթների գների/ համեմատման գործիքները, դրանց բարելավման հնարավոր միջոցները: Մասնավորապես Հունաստանի ներկայացուցչի կողմից ներկայացվեց հենց իրենց կարգավորողի ֆինանսավորմամբ և նախաձեռնությամբ մշակված հարթակը, նախատեսված՝ սպառողներին համապատասխան էլեկտրաէներգիայի փաթեթի ընտրության գործընթացում աջակցելու համար, քննարկվեցին դրա առավելությունները և թերությունները:
- Քննարկվեցին ծագման երաշխիքների էությունը, դրանց կարևորությունը, ներդրման գործընթացը: Ներկայացվեցին ուղեցույցներ՝ ներկա մոլորեցնող մարքեթինգային մեթոդների առկայության պայմաններում համապատասխան ծագման էլեկտրաէներգիա ընտրելու համար: Ներկայացվեց նաև Հյուսիսային Մակեդոնիայի փորձը՝ ծագման սերտիֆիկատների ներդրման մասով:

Էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հաճախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հերթական 62-րդ նիստին ներկայացվեցին անդամ և դիտորդ երկրներում տեղի ունեցած իրավական փոփոխությունները, զարգացումները մանրածախ շուկայի և սպառողների իրավունքների ոլորտում: Քննարկվեցին աշխատանքային խմբի կողմից նախապատրաստվող փաստաթղթերի մշակման գործընթացը, հետագա քայլերը, ներկայացվեցին արդեն իսկ կատարված աշխատանքները: Խմբի անդամների գիտելիքների զարգացման նպատակով առանձին քննարկում կազմակերպեց էլեկտրաէներգիայի առաջարկի և պահանջարկի

բալանսավորման մասին, որի շրջանակներում ներկայացվեց գործող փորձը տարբեր երկրներում, առկա խնդիրները և առաջարկվեցին հնարավոր լուծումներ, այդ թվում՝ շեշտադրելով ագրեգատորի դերը այդ գործընթացում:

7. Հանդիպումները, ելույթները. – Հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հաճախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի հերթական 62-րդ նիստը, իսկ հոկտեմբերի 9-ին՝ Եվրոպայի էներգետիկայի կարգավորողների խորհրդի (CEER), էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի (ECRB) և էներգետիկայի կարգավորողների միջերկրածովյան ասոցիացիայի (MEDREG) եռակողմ հանդիպումը,

էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի հաճախորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի նիստին համապատասխան ելույթներ ունեցան անդամ երկրների, ինչպես նաև Հանձնաժողովի ներկայացուցիչները՝ ներկայացնելով իրավական փոփոխությունները, զարգացումները մանրածախ շուկայի և սպառողների իրավունքների ոլորտում:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատանքային խմբի հանդիպմանը պայմանավորվածություն ձեռք բերվեց խմբի կողմից իրականացվող ընթացիկ աշխատանքների շարունակման մասով, ինչպես նաև քննարկվեց հետագա հանդիպման ձևաչափը:

Եռակողմ հանդիպմանը պայմանավորվածություն ձեռք բերվեց 2026 թվականին ևս կազմակերպել նույն ձևաչափով հանդիպում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները -

Առաջարկվում է մշակման փուլում գտնվող նոր «Էլեկտրաէներգետիկայի մասին» օրենքի, ինչպես նաև դրա հիման վրա ընդունվելիք իրավական ակտերի շրջանակում ներդնել էլեկտրաէներգիայի շեյրինգի, ագրեգացման մասով հանդիպումներին ներկայացված փորձը, կարգավորումները՝ էլեկտրաէներգետիկական համակարգում առաջարկի և պահանջարկի բալանսավորման, սպառողներին անխափան էլեկտրամատակարարման ապահովման մեխանիզմների ներդրման նպատակով:

Գործուղվող ---------- 14.10.2025թ. ---------- ***Ա. Աղինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը __Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով____

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 744-ԳՔ, 19.08.2025թ**

3. ՀՀ ՀԾԿՀ իրավաբանական և լիցենզավորման վարչության իրավաբանական

և դատական սպասարկման բաժնի պետ՝ **Անուշիկ Աղինյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Վիեննա /Ավստրիա/**

5. Գործուղման ժամկետները **06.10.2025-09.10.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ**, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, **օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուշիկ Աղինյան	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)		-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)		-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)		-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	113	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50,389	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	201,556	201.556
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		201.56	201.56

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **13.10.2025թ.**